

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՈՒ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ Կառավարման խորհրդի նիստի

ք. Երևան 06.09.2013

Նիստի մասնակիցների ցանկը ներկայացվում է ստորև՝

1. Խորհրդի անդամներ	
Անուն, ազգանուն	Պաշտոն
Վահրամ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար, Կառավարման խորհրդի նախագահ
Ենոք Ազարյան	Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ տնօրեն, Կառավարման խորհրդի քարտուղար
Արեգ Գալստյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
Ալեքսան Կարապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Լիլի Մաքսուդյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեխնիկական կանոնակարգման վարչության պետ
Ալեքսանդր Վարդանյան	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ տնօրեն, ՍԱՐՄ ՏՀ 16 նախագահ
Նունե Դարբինյան	«Էկոգլոբ» ՀԿ նախագահ
Նորայր Ստեփանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կապի և տեղեկատվայնացման վարչության պետի տեղակալ
Արսեն Հախումյան	ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի տնօրեն
2. Այլ մասնակիցներ	
Էմիլ Տարասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավար
Գևորգ Ղազարյան	ՀՀ գյուղ. նախարարության ագրովերամշ. զարգ. վարչ. պետ
Գևորգ Նազարյան	Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ փոխտնօրեն
Աննա Ղուլունց	Ստանդարտների ազգային ինստիտուտ, արձանագրող

Օրակարգում՝

1. Բացման խոսք, օրակարգի ներկայացում և հաստատում
2. Կառավարման խորհրդի նախագահի ընտրություն
3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմնի կարգավիճակի և գործառույթների քննարկում (սերտիֆիկացման գործառույթի տարանջատման խնդիրը)
4. ՍԱԻ ինստիտուցիոնալ կառուցվածքի և հաստիքացուցակի քննարկում, ՍԱԻ շենքի փոփոխման, Ինստիտուտի տեղափոխման հետ կապված խնդիրների քննարկում
5. ՍԱԻ 2013թ. 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը, ֆինանսատնտեսական ցուցանիշները
6. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2013-2015թթ. Ռազմավարական ծրագրի ներկայացում
7. Այլ հարցեր

1. Բացման խոսք, օրակարգի ներկայացում և հաստատում՝

Լսեցին՝

- ՀՀ էկոնոմիկայի նախարարին, որը հանդես եկավ բացման խոսքով և ողջունեց կառավարման խորհրդի անդամներին: Նախարարը կարևորեց Ստանդարտների ազգային ինստիտուտի դերը որպես որակի ենթակառուցվածքի բաղկացուցիչ և կարևորագույն տարր: Անդրադառնալով Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի նախաստորագրմանը՝ նախարարը հայտնեց, որ բավականին աշխատանքներ են տարվել ՀՀ-ում ստանդարտները և որակի համակարգի կանոնները եվրոպական ստանդարտներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Նախարարը կարծիք հայտնեց, որ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրն անհամատեղելի չէ Մաքսային միությանն անդամակցության հետ և պետք է շարունակել համագործակցությունը եվրոպական գործընկերների հետ:
- Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե. Ազարյանին, ով հանդես եկավ ողջունի խոսքով և նշեց որ Կառավարման Խորհրդի նիստերը պետք է շարունակական և պարբերական բնույթ կրեն: Այնուհետև պրն. Ազարյանը ներկայացրեց օրակարգը, որը հաստատվեց մասնակիցների կողմից:

Որոշեցին՝

- Հաստատել օրակարգը:

2. Կառավարման խորհրդի նախագահի ընտրություն՝

Լսեցին՝

- Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե. Ազարյանին, որն առաջարկեց Վ. Ավանեսյանի թեկնածությունը Կառավարման խորհրդի նախագահի պաշտոնում: Ներկա մասնակիցներից ոչ ոք որևէ այլ թեկնածություն չառաջարկեց:

Որոշեցին՝

- Կառավարման խորհրդի նախագահ ընտրել ՀՀ էկոնոմիկայի նախարար պարոն Վահրամ Ավանեսյանին:

3. ՍԱԻ գործառույթների քննարկում (սերտիֆիկացման գործառույթի փարանջատման խնդիրը) և

4. ՍԱԻ ինստիտուցիոնալ կառուցվածքի և հաստիքացուցակի քննարկում, ՍԱԻ շենքի փոփոխման, Ինստիտուտի տեղափոխման հետ կապված խնդիրների քննարկում՝

Լսեցին՝

- Կառավարման խորհրդի նախագահին, ով անդրադարձավ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմնի կարգավիճակի և գործառույթների քննարկմանը: Պարոն Ավանեսյանը նշեց, որ ելնելով Ասոցացման և ԽՀԱԱՀ համաձայնագրերի ստորագրման նախապայմաններից, նախատեսվում էր տարանջատել սերտիֆիկացման և ստանդարտացման գործառույթները: Այդուհանդերձ, ներկայիս փուլում, հատկապես Մաքսային միությանն անդամակցության պարագայում նպատակարար չէ իրականացնել այդ վերափոխումը, քանի որ ստանդարտացման նոր մարմինը պետք է վերածվի պետական բյուջեի միջոցներից կախվածության մեջ գտնվող կառույցի: Այսինքն, պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտություն է առաջանում, ինչի հնարավորությունը ներկայումս չկա: Միաժամանակ, ստանդարտացման աշխատանքների հետագա զարգացումը պահանջում է լրացուցիչ միջոցների ներգրավում, ինչը հնարավոր կլինի ապահովել սերտիֆիկացման աշխատանքների հաշվին:
- Նախարարն առաջարկեց ՍԱԻ ինստիտուցիոնալ կառուցվածքը ներկայումս թողնել անփոփոխ և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում: Միաժամանակ, պարոն Ավանեսյանն առաջարկեց հաստիքացուցակի քննարկումը, ՍԱԻ շենքի փոփոխման, Ինստիտուտի տեղափոխման հետ կապված խնդիրների քննարկումը հետաձգել մինչև հաջորդ նիստը:

Որոշեցին՝

- ՍԱԻ ինստիտուցիոնալ կառուցվածքը թողնել անփոփոխ և չտարանջատել սերտիֆիկացման գործառույթը:
- Աջակցել ՍԱԻ-ին ստանդարտացման նպատակներով լրացուցիչ միջոցների ներգրավման հարցում:
- ՍԱԻ հաստիքացուցակի փոփոխման, շենքի փոփոխման և ՍԱԻ տեղափոխման հարցերը քննարկել մյուս նիստին:

5. ՍԱԻ 2013թ. 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը. ֆինանսատնտեսական ցուցանիշները՝

Լսեցին՝

- Կառավարման խորհրդի քարտուղար Ե.Ազարյանին՝ ներկայացրեց ՍԱԻ 2013թ. 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

Որոշեցին՝

- Հաստատել ՍԱԻ 2013թ. 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

6. Հայաստանի Հանրապետության սրանդարացման 2013-2015թթ. Ռազմավարական ծրագրի ներկայացում

Լսեցին՝

- ՍԱԻ փոխտնօրեն Գևորգ Նազարյանին, ով համառոտ ներկայացրեց ծրագրի նպատակը, բովանդակությունը և մշակման գործընթացը:
- Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Արեգ Գալստյանին, որն ընդգծեց միջուկային էներգետիկայի ոլորտում մշակվող ստանդարտների անհրաժեշտությունը և դրանից ածանցվող այլ խնդիրները, որոնց լուծման համար բացի բյուջեից անհրաժեշտ են այլ աղբյուրներ:
Պարոն Ա.Գալստյանը հայտնեց նաև, որ ատոմային էներգետիկայի օրենքները թույլ են տալիս կիրառել ստանդարտներ բնագրաբնույթ տեքստով, միայն անհրաժեշտ է ընդունել դրանք:
- Քաղաքաշինության նախարարի տեղակալ Ալեքսան Կարապետյանին, ով կարծիք հայտնեց, որ ՀՀ ստանդարտացման 2013-2015թթ. ռազմավարական ծրագրով մշակման համար նախատեսված քաղաքաշինության ոլորտում ստանդարտներն անհրաժեշտ է վերանայել և ընդգրկել մի շարք այլ ստանդարտներ: Միաժամանակ, «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ տնօրեն Ալեքսանդր Վարդանյանը նշեց, որ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով ստանդարտները պետք է մշակվեն տեխնիկական հանձնաժողովների կողմից: Այդուհանդերձ, լրացուցիչ ստանդարտների ընդգրկումը ծրագրի մեջ կպահանջի լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որոնք ներկայումս հասանելի չեն:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարն առաջարկեց Ռազմավարական Ծրագրի ընդլայնման նպատակով գտնել ֆինանսավորող շահագրգիռ կազմակերպություններ: Նախարարը նշեց, որ բացի առկա միջոցներից պետք է լրացուցիչ միջոցներ գտնել մաքսային միության շրջանակներում, իսկ ԵՄ դոնոր կազմակերպությունների ընտրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդ կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջներին:

Որոշեցին՝

- Հաստատել ՀՀ Ստանդարտացման 2013-2015թթ. միջնաժամկետ ռազմավարական ծրագիրը: Լրացուցիչ առաջարկություններ և առարկություններ ներկայացվելու դեպքում խմբագրել ծրագրի համապատասխան հատվածները:

7. Այլ հարցեր

Լսեցին՝

- ՍԱԻ տնօրեն, Կառավարման խորհրդի քարտուղար պարոն Ենոք Ազարյանին, ով տեղեկացրեց, որ ս.թ. սեպտեմբերի 16-21 ընկած ժամանակահատվածում Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը կմասնակցի ԻՍՕ 36-րդ վեհաժողովին, որը տեղի կունենա ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում: Վեհաժողովի ընթացքում նախատեսվում է համագործակցության համաձայնագրեր ստորագրել մի շարք Եվրոպական երկրների ստանդարտացման ազգային մարմինների հետ: Տեղի

կունենա նաև ԱՊՀ երկրների ստանդարտացման ազգային մարմինների ղեկավարների հանդիպումը:

- ՍԱԻ տնօրեն, Կառավարման խորհրդի քարտուղար պարոն Ենոք Ազարյանին, ով տեղեկացրեց, որ Ստանդարտների ազգային ինստիտուտի և բրիտանական GIC կազմակերպության կողմից համատեղ ս.թ. հոկտեմբերի 2-ին Երևանում անց է կացվելու հեղինակավոր համաշխարհային մեծ համբավ ունեցող Top Ten Award մրցանակաբաշխությունը, որին կմասնակցեն շուրջ 50 երկրներից ընտրված բարի համբավ վայելող կազմակերպություններ:
- ՍԱԻ տնօրեն, Կառավարման խորհրդի քարտուղար պարոն Ենոք Ազարյանին, ով տեղեկացրեց, որ ԻՍՕ-ի և Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից համատեղ ս.թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը Երևանում անց է կացվելու տարածաշրջանային սեմինար նվիրված ստանդարտացման աշխատանքներում շահագրգիռ կողմերի ներգրավմանը և նրանց հետ աշխատանքների կազմակերպմանը: Սեմինարին կմասնակցեն շուրջ 20 երկրների ստանդարտացման մարմինների ներկայացուցիչներ:

**ՀՀ էկոնոմիկայի նախարար,
Կառավարման խորհրդի նախագահ**

Վ. Ավանեսյան

**Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն,
Կառավարման խորհրդի քարտուղար**

Ե. Ազարյան